h.807454
08-05-2023թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *ԱՆԴՐԱՆԻԿ ՈՒԳՈՒՋՅԱՆ*
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Հասցե՝ *ԵՐԵՎԱՆ, 0006, ՇԵՆԳԱՎԻԹ,*
ՄԱՆԹԱՇՅԱՆ Փ., 51, 6
ugujyanandranik@gmail.com : 37441446087

ԲՈՂՈՔ

Ուսումնասիրելով ՀՀ-ի եզակի ճարտարապետական կառուցները, հանդիպեցի Արտեկ մանկապատանեկան ճամբարի լքված եւ կիսաավեր կառույցին, որը գտնվում է Լոռի մարզում՝ Վանաձոր քաղաքի բարձրադիր վայրում (կից լուսանկարը)։ Անտառի մեջ կառուցված այս ճամբարն ամեն տարի իր շուրջն է հավաքել երիտասարդ պիոներներին, ովքեր ճամբարը լցրել են կյանքով ու պատանեկան աղմուկով։ Արտեկ ճամբարը լքվել է 1980-ականների վերջին։ Վանաձորի համայնքապետարանից ասացին, որ Արտեկ ճամբարը երբեք համայնքին չի պատկանել, պատկանել է կառավարությանը եւ կառավարությանն էլ այն հետագայում տրվել է մասնավորեցման։

Քանի որ այդ Արտեկ ճամբարի եզակի ճարտարապետական լուծումներով շենքը գնալով ոչնչանում է, ապա համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ պահանջում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետեւյալ կետերի մասին՝ հնարավորինս հստակ եւ ամբողջական ձեւակերպմամբ, ինչպես նաեւ, որպես ծանուցման ձեւ ընտրել էլ.փոստը.

1. **Ե՞րբ եւ ի՞նչ պայմանագրով է Արտեկ ճամբարը տրվել մասնավորեցման:**
2. **Ինչու՞ է այժմ Արտեկ ճամբարը այդպիսի խայտառակ վիճակում եւ պարզապես ոչնչանում է:**
3. **Հնարավոր է արդյո՞ք, եթե ներկայիս սեփականատերը քայլեր չձեռնարկի վերականգման համար, պետությունը որոշակի քայլեր ձեռնարկի:**

Բողոքին արձագանքել հստակ՝ բոլոր կետերին անրադառնալով, լրոզված եւ անհասկանալի, երկիմաստ պատասխաններ եւ անիմաստ հղումներ, որոնք հարցման մեջ նշված կետերի պատասխանները չեն պարունակում չնշել։

Բողոքին արձագանքել էլեկտրոնային տարբերակով, ՀՀ-ի քաղաքացիների

հարկերից գոյացած պետական միջոցները չվատնել տեղեկատվությունը տպագրելու եւ փոստով ուղարկելու վրա:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Եթե տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում գրավոր՝ հստակ ձեւակերպմամբ, համապատասխան օրենքների կամ որոշումների հղումներով, տեղյակ պահել մերժման հիմքի մասին եւ տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Իմ կողմից նախընտրած ծանուցման ձեւը՝ էլ.փոստն է: Էլ.փոստի «Subject» բաժնում նշել համապատասխան «Subject»-ը, որտեղ կարտացոլվի կառույցի անվանումը եւ պարոունակող փաստաթղթի տեսակը (օրինակ՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ Ուղղված Հարցման Պատասխան), ինչպես նաեւ՝ պատասխանը կցել «PDF» ձեւաչափով (անվորակ եւ ծուռմռտիկ սկանավորված փաստաթղթեր չուղարկել):

Ինչպես նաև հիշեցնեմ, որ ՀՀ վարչական դատարանը 2022 թվականի հունիսի 9-ին բավարարել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի տեղեկատվության ազատության իրավունքը խախտելու համար, հետևաբար հորդորում եմ Երևանի քաղաքապետարանի նման չխախտել տեղեկատվության ազատության իրավունքները (http://www.foi.am/hy/news/item/2253/fbclid=IwAR2wuXivKglKVaw09MUIJybMfHaqYzlMMnZpH2Uz4whZ3tmFJ8anTdOf3p):

Կից՝ 4 ֆայլ

Դիմող՝

ԱՆԴՐԱՆԻԿ ՈՒԳՈՒՋՅԱՆ